Տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը հանում է նորընծա տ. Մոմիկ քահանայի գլխից սարկավագական ջրոունը (գդակ)՝ այն փոխարինելով կուսակրոն քահանայության խորհրդանիշ վեղարով. «Հանցէ Աստուած զհին մարդն՝ որ ըստ Աստուծոյ հաստատեալ է արդարութեամբ և սրբութեամբ...»:

Նույն օրը, ժամը 15-ին, Ղազարապատի միաբանական սեղանատանը տրվում է ճաշկերույթ՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ՝ ի պատիվ նորապսակների:

Տ. Մոմիկ աբեղա Սարգսյան

Տ. Մոմիկ աբեղա Սարգսյան

Ծնվել է 1950 թվականին Լենինականում, քահանայի ընտանիքում:

1968 թվականին ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և 1969 թվականին ընդունվել հոգևոր ճեմարան:

1972 թվականին սարկավագ է ձեռնադրվել: Հոգևոր ճեմարանն ավարտել է 1974 թվականին: Ավարտաճառի թեման է եղել՝ «Խրիմյան Հայրիկը որպես մանկավարժ»:

Նորընծա աբեղան այժմ աշխատում է հոգևոր ճեմարանում որպես ավագ վերակացու:

Տ. Արտակ քահանա Սիմոնյան

Ծնվել է 1951 թվականին Ալթայի երկրամասի Մաքսիմովկա գյուղում:

1956 թվականին ներգաղթել և մշտական բնակություն է հաստատել, ծնողների հետ, Էջմիածին քաղաքում:

1965 թվականին ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և նույն տարին էլ ընդունվել հոգևոր ճեմարան: 1971 թվականին ավարտել է ճեմարանը: Նրա ավարտաճառի թեման է եղել՝ «ԺԹ դարի գրաբարյան»:

1970 թվականին սարկավագ է ձեռնադրվել և մինչև 1972 թվականը պաշտոնավարել հոգևոր ճեմարանում որպես ուսուցիչ և վերակացու:

ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱԲԵՂԱ ՆԱՋԱՐՅԱՆԻ

Ս/թ. փետրվարի 1—2-ը կարևոր օրեր եղան լոնդոնահայության համար: Այդ գաղութի պատմության մեջ առաջին անգամ կատարվեց քահանայական ձեռնադրություն՝ ձեռամբ Անգլիայի հայրապետական պատվիրակ և Լոնդոնի հայոց հոգևոր տեսուչ տ. Ներսես եպս. Պոզապալյանի: Այս առթիվ Փարիզից հրավիրվել էր տ. Նորվան վրդ. Զաքարյանը՝ որպես խարտավիլակ:

Նորընծա Վրեժ սրկ. Նաջարյանը Մայր Աթոռ ս. Էջմիածնի միաբան է: Ծնվել է 1952 թ. Հալեպում: Նախնական կրթությունը ստացել է Բեյրութի Հովակիմյան-Մանուկյան վարժարանում: 1967 թ. ընդունվել է Մայր Աթոռ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան և ավարտել այն 1973 թ.: Ավարտաճառի թեման է եղել՝ «Մխիթար Գոշի «Մեկնութիւն Երեմիայի» աշխատությունը»: Սարկավագ է ձեռնադրվել 1972 թ.: 1974 թ. սեպտեմբերից իր բարձրագույն աստվածաբանական ուսումն է շարունակում Քենտրբերիի ս. Օգուստին քոլեջում:

Փետրվարի 1-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 17.30-ին, տեղի է ունենում նորընծայի կոչման արարողությունը:

Փետրվարի 2-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Լոնդոնի ս. Սարգիս եկեղեցում սկսվում է ս. պատարագի արարողությունը: Պատարագում է տ. Ներսես եպս. Պոզապալյանը: «Ողջոյն»-ից առաջ

սրբազան հայրը օծում է նորընծայի հակատը և ձեռքերը՝ վերանվանելով նրան տ. Հայկազուն քահանա: Օծման սրտառուչ արարողության ավարտին քարոզում է պատարագիչ սրբազան հայրը՝ «Հայր իմ և մայր իմ թողին զիս և Տէր ընկալաւ զիս» բնաբանով:

Ս. պատարագին և ձեռնադրության արարողությանը անգլիական եկեղեցու կողմից հրավերով մասնակցում էին Քենտրբերիի արքեպիսկոպոսի քարտուղար կանոնիկոս հայր Մայքլ Մուրը և ս. Օգոստին քոլեջի տեսուչ հայր Ա. Հարվին:

Նույն օրը, երեկոյան, կատարվում են «Օրհնութիւն աբեղայի» և «Օրհնութիւն վեղարի» կարգերը:

Ս. պատարագից հետո հյուրերը և ներկաները հրավիրվում են Նվարդ Կյուլպենկյան սրահ, Տիկնանց հանձնախմբի կազմակերպած փառավոր ճաշկերույթին:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է նորընծաներին և մաղթում, որ նրանք լինեն ճշմարտապես գիտակից սպասավորները հայ եկեղեցու, հարազատ զավակները Մայր Աթոռի և «մշակք առանց ամօթոյ»:

Տ. Հայկազուն արիղա Նաջարյան